

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ
ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

(չորրորդ հրատարակություն)



«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»
հասարակական կազմակերպություն
ԵՐԵՎԱՆ - 2009



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Գրքույկը վերահրատարակվել է ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի աջակցությամբ:

ISBN 978-92-9235-836-5

Հրապարակումը իրականացվել է
Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
(ՔՀԻ) ՀԿ-ի կողմից:

Հասցե՝ 0025, Երևան, Այգեստան 11 փ., 43

csi@csi.am

www.csi.am

հեռ. 37410- 574317

Անվճար իրավական խորհրդատվության թեժ գիծ՝
080-080-804

Գրքույկը տեղեկություն է պարունակում այն անձանց հիմնական իրավունքների մասին, ովքեր այս կամ այն պատճառով պետք է շփվեն իրավապահ մարմինների հետ՝ ինչպես վկաների, այդպես էլ կասկածյալների և մեղադրյալների՝ սկսած հարցաքննությանը հրավիրելուց մինչև մեղադրանք առաջադրելը և խափանման միջոց ընտրելուց հետո: Այն Ձեզ անհրաժեշտ գիտելիքներ կտա Ձեր, Ձեր մերձավորների իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ:

Ձեզ է ներկայացվում գրքույկի չորրորդ հրատարակությունը, ուր ներկայացված է ՀՀ օրենսդրությունը առ 1 նոյեմբերի 2009 թվականի:

Ոստիկանության աշխատակիցները մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում պարտավոր են նրան անմիջապես ներկայացնել սահմանափակման հիմքերը և բացատրել նրա իրավունքներն ու պարտականությունները:

Ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված կամ կալանավորված անձանց իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրենց իրավունքից, օրենքով սահմանված կարգով տեղյակ պահել նրանց հարազատներին, աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին: Անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել նրանց բժշկական և (կամ) այլ օգնություն ցույց տալու, ինչպես նաև ձերբակալման կամ կալանավորման կապակցությամբ անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ:

(ՀՀ օրենք «Ոստիկանության մասին», Հ.5)

Եթե իրավապահ մարմինների ներկայացուցիչները Ձեզ առաջարկում են անցնել ոստիկանության բաժանմունք

Իրավապահ մարմինների աշխատողը պարտավոր է ներկայանալ, ցույց տալ համապատասխան վկայական: Ձեզ պետք է հայտնեն, թե ինչն է բաժանմունք տանելու պատճառը, և ինչու է դա անհրաժեշտ:

Եթե Ձեզ մոտենում են փողոցում և խնդրում են անցնել բաժին, ապա չարժե դիմադրելու փորձ կատարել, քանի որ այդ դեպքում Ձեր գործողությունները կարող են համարվել անգամ որպես պաշտոնատար անձին դիմադրում, որի համար կարող եք քրեական պատասխանատվության ենթարկվել:

Եթե Ձեզ բերման են ենթարկել, ապա դա Ձեր ազատության սահմանափակում է համարվում

Երբ մարդու ազատությունները սահմանափակվում են, նա իրավունք ունի՝

1) սահմանափակման պահից իմանալու իր ազատության սահմանափակման պատճառները, հիմքերը, իր ազատությունը սահմանափակող

ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.

2) ստանալու իրավաբանական օգնություն.

3) բացատրություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց.

4) ծանոթանալու իր իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն անմիջականորեն առնչվող փաստաթղթերին կամ նյութերին.

5) պահանջելու, որպեսզի ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում իր գտնվելու վայրի մասին տեղեկացվի իր կողմից ընտրված անձը.

6) անհրաժեշտության դեպքում ստանալու բժշկական օգնություն.

7) պահանջելու օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել իր ազատության սահմանափակման կապակցությամբ իր կամ ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու, ինչպես նաև իր տիրապետման տակ գտնվող՝ առանց հսկողության մնացած գույքը պահպանելու նպատակով.

8) ծանոթանալու իր ազատության սահմանափակման օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու կարգին, ոստիկանության գործողություններն ու որոշումները բողոքարկելու վերադասության կարգով կամ դատախազին կամ դատարան:

9) ոստիկանություն բերվելիս՝ իր պահանջով ստանալու իրավունքների մասին իր համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցում:

10) պահանջելու, որպեսզի իրեն թույլ տան օգտվելու իր իրավունքներից՝ դրա մասին գրավոր դիմելով իր ազատությունը սահմանափակած ոստիկանության ծառայողին: (ՀՀ Կառավարության 14.06.07թ, 818-Ն որոշում)

Ինչպե՞ս պետք է վարվել, եթե հրավիրում են ոստիկանություն հեռախոսազանգով կամ ծանուցագրով

Եթե ինչ-որ մեկը Ձեզ զանգահարել է և առաջարկում է գալ ոստիկանության բաժին, դատախազություն, ազգային անվտանգության ծառայություն կամ որևիցե քննչական վարչություն, Դուք իրավունք ունեք պահանջել գրավոր ծանուցագիր, որի մեջ պետք է նշվի, թե ով է Ձեզ հրավիրում, ինչ գործով, ինչպիսի իրավական կարգավիճակով /որպես տուժող, վկա, կասկած-

յալ, թե՞ մեղադրյալ/։ Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները։ (ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, այսուհետև՝ Քրդատ, Հ.205)

/// *Ծանուցագրում նշված ներկայանալու օրը և ժամը կօգնի խուսափել հետագա չարաշահումներից։*

Կասկածյալը, մեղադրյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչնդոտող հարգելի պատճառների առկայության մասին։

Առանց հարգելի պատճառների կանչով չներկայանալու դեպքում կասկածյալը, մեղադրյալը, ինչպես նաև վկան և տուժողը պատճառաբանված որոշմամբ կարող են բերման ենթարկվել։ (Քրդատ, Հ.153)

Որքա՞ն ժամանակ կարող են Չեզ պահել ոստիկանության բաժանմունքում կամ այլ վայրում

Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը:

Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ: (Քրդատ, Հ.205¹)

Վկան պետք է մնա քննություն իրականացնող մարմնում այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է քննչական գործողությունների համար:

Քննչական գործողությունները չի թույլատրվում անցկացնել գիշերային ժամերին՝ ժ 22⁰⁰-7⁰⁰: (Քրդատ, Հ.188¹ Կ.1)

Եթե ոչ մի քննչական գործողություն չի կատարվում, սակայն վկայի ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակվում է (նրան թույլ չեն տալիս հեռանալ, կամ ինքն իրեն զգում է անազատության մեջ) նշանակում է, որ անձը փաստացի գտնվում է արգելանքի տակ: Տվյալ դեպքում, նրան պետք է կամ անհապաղ ազատ արձակեն, կամ կազմեն արձանագրություն ձերբակալման մասին: Հակառակ դեպքում տեղի է ունենում միջազգային նորմերի կոպիտ խախտում:

Կարո՞ղ եք արդյոք փաստաբան հրավիրել

Վկան իրավունք ունի հարցաքննվել փաստաբանի ներկայությամբ: Փաստաբանը պետք է հրավիրված լինի վկայի կողմից: (Քրդատ, Հ.206 Կ.6)

Պարտավո՞ր եք արդյոք ցուցմունք տալ

Վկան պետք է ցուցմունք տա հանցագործությանը վերաբերող իրեն հայտնի փաստերի մասին:

Հարցաքննությունից առաջ քննիչը պետք է տեղեկացնի վկային, թե որ գործով է նա կանչվել:

Դրանից հետո նախագուշացնում է գործով նրան հայտնի ամեն ինչ պատմելու պարտականության, ինչպես նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: (ՀՀ Սահմանադրության Հ.22, Քրդատ, Հ.206)

Ոչ ոք պարտավոր չէ վկայել իր, իր մերձավոր ազգականների (ծնողների, զավակների, որդեգրողների, որդեգրվածների, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրների և քույրերի, պապի, տատի, թոռների, ինչպես նաև ամուսնու և ամուսնու ծնողների, վերջիններիս համար նաև փեսայի և հարսի) վերաբերյալ: (Քրդատ, Հ.հ.20, 6)

Կարող է արդյոք հարցաքննվել անչափահասը

Անչափահաս վկան, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ:

Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: Հարցաքննությունն սկսվելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում է հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր տալու նրա իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունել տրված հարցերը, սակայն դրանք պետք է մտցվեն արձանագրության մեջ:

Տասնվեց տարին չլրացած վկային բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, չնայած օրենքով նախատեսված չէ պատասխանատվություն ցուցնունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու և ակնհայտ սուտ ցուցնունքներ տալու համար: (Քրդատ, Հ.207)

Հարազատներին տեղեկացնելու հնարավորություն

Եթե Դուք կանչվել եք որպես վկա, աշխատեք նախօրոք տեղյակ պահել Ձեր հարազատներին՝ որտեղ են Ձեզ կանչել, կանչելու օրն ու ժամը: Եթե Դուք վկա եք, Ձեզ իրավունք չունեն արգելելու զանգահարել Ձեր հարազատներին:

Անձը դառնում է կասկածյալ այն պահին՝

1) երբ ձերբակալվում է հանցանք կատարելու կասկածով.

2) երբ նրա նկատմամբ մինչև մեղադրանք առաջադրելը խափանման միջոց (օրինակ՝ ստորագրություն չհեռանալու մասին) ընտրելու վերաբերյալ որոշում է կայացված: (Քրդատ, 3.62)

Որքա՞ն ժամանակ կարող է տևել ձերբակալությունը

Ձերբակալումը չի կարող տևել 72 ժամից ավել (ձերբակալման պահից մինչև դատարանի կողմից կալանավորման կամ ազատման մասին որոշումը կայացնելը): (ՀՀ Սահմանադրության հ.16, Քրդատ, 3.11)

Հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Արձանագրությունում նշվում են կազմելու ժամանակը (օրը, ամիսը,

տարեթիվը, ժամը, րոպեն), ձերբակալման ժամանակը, վայրը, հիմքը (հիմքերը) և նպատակը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով նախատեսված հանցանքի կատարման մեջ կասկածվում է ձերբակալվածը, նրա անձնական խուզարկության արդյունքները և այլ հանգամանքներ, ինչպես նաև ձերբակալվածի հայտարարություններն ու միջնորդությունները:

Ձերբակալման ժամի նշունը շատ կարևոր է, քանի որ արձանագրության մեջ նշված պահից է հաշվարկվում ձերբակալման ժամկետը: Եթե արձանագրությունում նշված ժամը չի համապատասխանում փաստացի արգելանքի վերցնելու (բաժին բերելու) ժամին, կարող եք նշել այդ փաստը արձանագրությունը ստորագրելիս: Ձեզ պետք է հանձնեն արձանագրության պատճենը:

Ձերբակալման մասին արձանագրությունում նշվում է կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին: (Քրդատ, Հ.131¹)

Ձերբակալման արձանագրության ստորագրումից անմիջապես հետո Ձեզ պետք է ծանոթացնեն Ձեր իրավունքներին (այդ թվում՝ պաշտպան ու-

նենալու հնարավորությանը), և այդ մասին պետք է արձանագրություն կազմվի և ստորագրվի Ձեր կողմից: (Քրդատ, 3.63)

Պահանջեք իրավունքների մասին ծանուցման թերթիկը և մանրամասն ուսումնասիրեք այն:

Նշված գործողությունները պետք է կատարվեն անձի համար հասկանալի լեզվով: Անգամ եթե կասկածյալը ՀՀ քաղաքացի է, սակայն չի տիրապետում հայերենին, քննիչը պետք է հրավիրի թարգմանիչ, իսկ իրավունքների մասին բոլոր փաստաթղթերը կասկածյալին պետք է հանձնվեն հասկանալի լեզվով թարգմանված վիճակում (Քրդատ, 3.15):

Կարո՞ղ եք արդյոք փաստաբան հրավիրել


/// Ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից Դուք ունեք Ձեր ընտրությանը պաշտպան ունենալու իրավունք: (ՀՀ Սահմանադրություն 3.20, Քրդատ, 3.63)

Դրա մասին Ձեզ պարտավոր են հայտնել գրավոր և կազմել արձանագրություն պաշտպան ունենալու կամ պաշտպանից հրաժարվելու Ձեր ցանկության մասին:

Եթե Դուք ունեք ծանոթ փաստաբան, որին կուզենայիք ներգրավել որպես պաշտպանի, դիմեք քննիչին, որպեսզի նա ուղղակիորեն կամ Ձեր հարազատների միջոցով կապվի տվյալ անձի հետ: Ձեր ընտրած պաշտպանին հրավիրելու դիմումը կարող եք գրել Դուք, Ձեր հարազատները կամ բարեկամները:

Եթե Դուք ցանկանում եք պաշտպան ունենալ, բայց չունեք նրան հրավիրելու հնարավորություն, դիմեք քննիչին, որպեսզի Ձեզ անվճար պաշտպան տրամադրեն: (Քրդատ, Դ.70)

Կասկածյալը և մեղադրյալը իրավունք ունեն առանձին, կոնֆիդենցիալ՝ առանց այլ անձի մասնակցության, անարգել տեսակցել իրենց պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման: (Քրդատ, Դ.հ.63, 65)


 Կասկածյալի պաշտպանի հետ տեսակցության տեվողությունը առանձին դեպքերում կարող է սահմանափակվել, սակայն ամեն դեպքում չի կարող երկու ժամից պակաս լինել:
 (Քրդատ, Դ.211)

Զայաստանում գործում է Փաստաբանների
 պալատ: Անվճար (հանրային)
 պաշտպանությունը իրականացնում է
 Հանրային պաշտպանի գրասենյակը:
 Հանրային պաշտպանի գրասենյակը
 փաստաբանների պալատի կազմում գործող
 կառուցվածքային ստորաբաժանում է:
 Հասցեները տես` հավելված 3:

Ձերբակալվածի և նրա պաշտպանի տեսակ-
 ցության անվտանգությունն ապահովելու նպա-
 տակով ձերբակալվածներին պահելու վայրերի
 (ՁՊՎ-ի) ծառայողների կողմից իրականացվում
 է տեսողական հսկողություն, որը թույլ է տալիս
 տեսնել, բայց չլսել նրանց: Հերթափոխի ըն-
 դունում-հանձնում կատարելու ժամանակ,
 օրվա կարգացուցակով հաստատված սննդի
 ընդունման ժամերին, ավարտակոչից մինչև
 վերկաց, սանիտարահամաճարակային
 միջոցառումներ անցկացնելիս, արտակարգ
 իրավիճակների ժամանակ արգելվում է
 ձերբակալվածներին տեսակցության համար
 դուրս բերել մենախցերից: (ՆԿ, Կ. 64)

Հարազատներին տեղեկացնելու հնարավորություն

Դուք իրավունք ունեք պահանջել, որ արգելանքի վերցվելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմինը տեղյակ պահի Ձեր մերձավոր ազգականներին արգելանքի տակ պահվելու, Ձեր գտնվելու վայրի մասին (Քրդատ, Գ.63): Ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է ձերբակալված անձի՝ ձերբակալվածներին պահելու վայր ընդունվելուց անմիջապես հետո հնարավորություն ստեղծել, որպեսզի ձերբակալվածը կապի հնարավոր միջոցով իր գտնվելու վայրի մասին տեղյակ պահի իր ընտրված անձին:

Ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է ձերբակալված անձի՝ ձերբակալվածներին պահելու վայր ընդունվելու կամ մեկ հիմնարկից մյուսը փոխադրվելու մասին անհապաղ տեղյակ պահել ձերբակալված անձի ընտրած անձին, եթե հնարավոր չի եղել, որպեսզի դա անի ինքը ձերբակալվածը: (ԳՅ օրենք «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» (այսուհետ՝ Օրենք), Գ.32)

Օտարերկրյա քաղաքացիները կարող են արգելանքի տակ պահվելու մասին հայտնել տվյալ պետության դեսպանատուն կամ հյուպատոսարան:

Եթե նրանք չեն տիրապետում հայոց լեզվին, քննիչը պարտավոր է թարգմանիչ հրավիրել:

Որտե՞ղ են պահվում ձերբակալված անձինք

Ձերբակալված անձինք պահվում են անջատ՝ մեցախցերում: (Օրենք, Բ.31)

Ձերբակալվածներին պահելու վայրեր (ՁՊՎ) ձերբակալվածները ընդունվում են շուրջօրյա: Ոստիկանության մարմնի հերթապահը ստուգում է ձերբակալվածներին ընդունելու և պահելու հիմքերը, ձերբակալվածներին ուղղված հարցերի միջոցով պարզում է ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ նշված անձնագրային տվյալների իսկությունը, այնուհետև համապատասխան գրանցում է կատարվում ձերբակալվածների հաշվառման գրանցամատյանում և անհատական քարտում:

ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու կամ մի

հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին, կապի հնարավոր միջոցով, անհապաղ տեղյակ պահել ձերբակալվածի ընտրած անձին:

Ձերբակալվածի վրա մարմնական վնասվածք հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ **գանգատ լինելու** դեպքում ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի, որը բուժօգնությունից կամ առաջին բուժօգնությունից հետո համապատասխան գրառում է կատարում գրանցամատյանում: (ՆԿ, Կ.13)

Ղատարժշկական հետազոտություն

Ձերբակալված անձը, իսկ նրա համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել ղատարժշկական հետազոտություն: (Օրենք, Հ.15)

Ձերբակալվածներին պահելու վայրերում (ՁՊՎ)՝

Անհատական օգտագործման նպատակով ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում ձերբակալվածներին տրամադրվում է՝

- 1) մահճակալ,
- 2) անկողնային պարագաներ և սպիտակեղեն,
- 3) խոհանոցային սպասք (ափսե, բաժակ, գդալ):
- 4) օճառ,
- 5) հիգիենիկ թուղթ,
- 6) գրենական պիտույքներ (թուղթ, գրիչ),
- 7) լրագրեր,
- 8) ՁՊՎ-ի վարչակազմի հսկողությամբ՝ մենախուցը մաքրելու առարկաներ և կենցաղում օգտագործվող այլ առարկաներ :

ՁՊՎ-ի մենախցերը ապահովվում են.

- 1) սեղանով, աթոռով
- 2) սանիտարական հանգույցով,
- 3) խմելու ջրի ծորակով (բաքով),
- 4) կենցաղային իրերի դարակով,
- 5) ռադիոընդունիչով,
- 6) աղբամանով:

Անձնական հիգիենայի համար ձերբակալվածներն ապահովվում են տաք ջրով և մինչև 15 րոպե տևողությամբ ցնցուղով լոգանք ընդունելու հնարավորությամբ:

Մենախցերում օդի ջերմաստիճանը +18 C-ից ցածր չպետք է լինի: (ՆԿ, Մ.3)

Մնունդ

Ձերբակալված անձը առողջության և ուժերի պահպանման համար ապահովվում է բավարար անվճար սննդով: Ձերբակալված անձն իր միջոցներով կարող է ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ չարգելված առարկաներ (տե՛ս **հավելված 1**): Սննդամթերքի և առաջին անհրաժեշտության առարկաներ ու իրեր ձեռք բերելու համար ձերբակալվածը դիմում է ներկայացնում ՁՊՎ-ի պետին: (ՆԿ. 3.4)

Պարտավո՞ր է արդյոք կասկածյալը ցուցմունք տալ

Ցուցմունք տալը Ձեր իրավունքն է, այլ ոչ՝ պարտականությունը: Դուք կարող եք չտալ ոչ մի ցուցմունք և այդ փաստը չի կարող օգտագործվել Ձեր դեմ: (Քրդատ, 3.63 Կ.7)

Ունե՞ք արդյոք տեսակցության, հեռախոսագանգի և հանճնուրի իրավունք

Ձերբակալված անձը ունի մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունք: Նրան տրամադրվում է առնվազն մեկ տեսակցություն՝ մինչև մեկ ժամ տևողությամբ:

Ձերբակալվածը նախօրոք տեղեկացվում է մերձավոր ազգականի հետ (հայր, մայր, ամուսին, կին, եղբայր, քույր, զավակներ, որդեգրողներ, որդեգրվածներ, հարազատ և ոչ հարազատ /համամայր, համահայր/, եղբայր, քույր, տատ, պապ, թոռներ, ինչպես նաև ամուսնու ծնողներ, վերջիններիս համար՝ փեսան և հարսը) տեսակցության մասին:

Մերձավոր ազգականների հետ տեսակցություններն անց են կացվում ՁՊՎ-ի ծառայողների հսկողությամբ: Տեսակցության ընթացքում ձերբակալվածին արգելված առարկաներ, քրեական գործի քննությանը խոչնդոտող կամ նոր հանցագործության կատարմանը նպաստող նյութեր, տեղեկություններ փոխանցելն արգելվում է: Այդպիսի փորձ կատարելու դեպքում տեսակցությունը վաղաժամկետ դադարեցվում է:

Ձերբակալվածի հետ տեսակցել թույլատրվում է միաժամանակ առավելագույնը երեք չափահաս և երեք անչափահաս անձանց, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել: (ՆԿ. Կ. 57)


Տեսակցությունը, քննության շահերից ելնելով, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր որոշմամբ: (Օրենք, Զ.15)

Ձերբակալված անձը իրավունք ունի կապ պաշտպանել ընտանիքի հետ, այդ թվում նաև հեռախոսից օգտվելով: Ձերբակալված անձանց հեռախոսային խոսակցությունները քննության շահերից ելնելով կարող են արգելվել քրեական վարույթ իրականացնող մարմնի գրավոր որոշմամբ (Օրենք, Զ.17):

Ձերբակալված անձն արգելանքի տակ գտնվելու ընթացքում կարող է ստանալ մինչև քսան կիլոգրամ հանձնուք: Նրան սահմանված չափի հանձնուք կարող է փոխանցել միանվագ կամ մաս-մաս: (Օրենք, Զ.22)

Չբոսանքի իրավունք

Ձերբակալված անձը ունի զբոսանքի իրավունք, որը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված տարածքում: Ձերբակալված անձանց զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրեկան մեկ ժամից: Ձերբակալված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ: (Օրենք, Զ.հ.16, 27)


 Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կանանց համար պետք է ստեղծվեն հանապատասխան նյութակենցադային պայմաններ, կազմակերպվի մասնագիտացված բուժսպասարկում: (Օրենք, Հ.27)

Բողոքարկում

Ձերբակալված անձը իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է տալ ամեն օր, գրավոր և բանավոր: Դատախազին, դատավորին, մարդու իրավունքների պաշտպանին, պաշտպանին, ձերբակալվածներին պահելու վայրերի իր նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կնքված փաթեթով մեկ օրվա ընթացքում պետք է ուղարկվեն հասցեատիրոջը (Օրենք, Հ.18):

Ո՞ր դեպքերում է ձերբակալված անձը ենթակա ազատման

Ձերբակալվածը ենթակա է ազատման, եթե՝

1) չի հաստատվել անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու մասին կասկածը,

2) բացակայում է անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը,

3) լրացել է ձերբակալման առավելագույն ժամկետը՝ 72 ժամ, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել: (ՀՀ Սահմանադրության Հ.16, Քրդատ, Հ.132)

Ձերբակալված անձինք արգելանքից ազատվելիս ապահովվում են մինչև իրենց բնակության վայրն անվճար ուղևորությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, դրա ընթացքում անհրաժեշտ սննդամթերքով, իսկ միջոցների բացակայության դեպքում՝ սեզոնային անհրաժեշտ հագուստով: Նրանց կարող է տրամադրվել նաև միանվագ դրամական նպաստ: (Օրենք, Հ.43)

Ե՞րբ է անձը կասկածյալից դառնում մեղադրյալ

Ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում ձերբակալվածին մեղադրանք է առաջադրվում: Եթե կասկածյալը չի ձերբակալվել (չի գրկվել ազատությունից), նրան պետք է մեղադրանք առաջադրվի խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից 7 օրվա ընթացքում:

Անձը ծանոթանում է որպես մեղադրյալ գործում ներգրավվելու մասին քննիչի որոշմանը, և այդ

պահից անձը դառնում է մեղադրյալ: Որոշման մեջ պետք է նշվի, թե ինչի համար է անձը մեղադրվում, և Քրեական օրենսգրքի որ հոդվածով է առաջադրվել մեղադրանքը: Այնուհետև նա պետք է նշի, թե առաջադրված մեղադրանքով իրեն մեղավոր ճանաչում է, թե՞ ոչ, որից հետո՝ 24 ժամվա ընթացքում, նրան հարցաքննում են որպես մեղադրյալի: (Քրդատ, Յ.հ. 65, 212)

Մեղադրյալի հարցաքննությունը, բացի անհետաձգելի դեպքերից, կատարվում է ցերեկը (Քրդատ. Յ. 212, 4.2):

Դուք կարող եք հրաժարվել ցուցմունք տալ, եթե Ձեր պաշտպանը ներկա չէ: (Քրդատ, Յ.հ.63, 65):

/// Եթե Դուք ունեք պաշտպան, իրավունք ունեք
 /// հարցաքննվել պաշտպանի մասնակցությամբ:
 /// Կարող եք հրաժարվել ցուցմունք տալուց
 /// մինչև Ձեր պաշտպանի գալը: (Քրդատ, Յ.65)

Եթե Դուք նույնիսկ նախկինում հրաժարվել եք պաշտպանից, ցանկացած պահի կարող եք պաշտպան հրավիրել: (Քրդատ, Յ.72, 4.4)

Խափանման միջոցներ

Մեղադրյալի նկատմամբ կիրառվում են հարկադրանքի միջոցներ, որոնք կոչվում են **խափանման միջոցներ**:

Խափանման միջոցներն են՝

- 1) կալանավորումը,
- 2) գրավը,
- 3) ստորագրությունը չհեռանալու մասին,
- 4) անձնական երաշխավորությունը,
- 5) կազմակերպության երաշխավորությունը,
- 6) հսկողության հանձնելը՝ անչափահասների համար,

7) հրամանատարության հսկողության հանձնելը՝ զինծառայողների համար: (Քրդատ. 3.134)

Եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի որոշում ընդունել տվյալ անձին ձերբակալելու մասին՝ միաժամանակ նրա կալանավորման մասին միջնորդություն ներկայացնելով դատարան (Քրդատ, 3.131, 4.1):

Մեղադրյալին ձերբակալում թույլատրվում է միայն այն դեպքում, երբ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները թույլ են տալիս նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանքը (Քրդատ, 3.131, 4.2):

Ո՞վ է որոշում ընդունում խափան- ման միջոցի տեսակի կիրառման վերաբերյալ

Բացի կալանավորումից և գրավից՝ խափան-
ման մնացած բոլոր միջոցները կիրառվում են
հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի
որոշմամբ: (Քրդատ, Յ.136, Կ.1)

Կալանավորումը և գրավը կիրառվում են միայն
դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի
միջնորդությամբ կամ դատարանի սեփական նա-
խաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը
քննելիս: Կալանավորման փոխարեն դատարանը
կարող է կիրառել գրավը նաև պաշտպանության
կողմի միջնորդությամբ: (Քրդատ, Յ.136, Կ.2)

Քննիչը մեղադրյալին հայտարարում է խափան-
ման միջոց կիրառելու մասին իր որոշումը և անմի-
ջապես նրան է հանձնում որոշման պատճեն:
(Քրդատ, Յ.136, Կ.3)

Եթե քննիչը համարում է, որ պետք է կալանք կիրառել

Այդ դեպքում քննիչը միջնորդություն է կազմում,
որի մեջ պետք է շարադրվեն այն հիմքերը,
որոնցով առաջացել է մեղադրյալին կալանավո-
րելու անհրաժեշտությունը: Որոշմանը կցվում են

միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը:

Կալանքը խափանման միջոց ընտրելու միջնորդությունը պետք է անհապաղ քննվի դատարանում: (Քրդատ, 3.285)

/// Ձերբակալված մեղադրյալի մասնակցությունը կալանքը խափանման միջոց ընտրելու վերաբերող դատական նիստին պարտադիր է: (Քրդատ, 3.285)

Ինչպե՞ս է ընթանում դատական նիստը

Դատական նիստը դռնփակ է: Դատավորը քննում է գործը միանձնյա: Դատական նիստին պետք է մասնակցեն քննիչը, պաշտպանը (եթե նա մասնակցում է գործին), անազատության մեջ գտնվող մեղադրյալը: Դատավորը կարող է բավարարել կամ մերժել ներկայացված միջնորդությունը: (Քրդատ, 3.285)

Ո՞ր դեպքերում կարող է կալանքը փոխարինվել գրավով

Կալանքի որոշումը կայացնելուց հետո ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության համար մեղադրվողն իրավունք ունի միջնորդել կալանքը գրավով փոխարինելու համար:

Ինչպե՞ս և ե՞րբ կարելի է բողոքարկել կալանք կիրառելու մասին դատարանի որոշումը

Կալանավորումը կամ գրավը՝ որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան այն հրապարակելու պահից 5 օրվա ընթացքում: Եթե բողոքը մերժվում է, ապա կարելի է բողոքարկել վճռաբեկ դատարան 15 օրվա ընթացքում (Քրդատ, 3.379, 412):

Ի՞նչ է հետևում կալանքը որպես խափանման միջոց ընտրելուն

Դատարանի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելուց հետո կալանավորված անձը տեղափոխվում է ՀՀ արդարադատության նախարարության՝ կալանավորվածներին պահելու վայր:

Կալանավորված անձը չի կարող 3 օրից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացառություն կարող է լինել միայն տրանսպորտային միջոցի բացակայության դեպքում (Քրդատ, 3.137):

Կալանավորելու որոշման ընդունումը և կալանավորվածներին պահելու վայր տեղափոխումը

Մեղադրյալին ձերբակալում թույլատրվում է միայն այն դեպքում, երբ Քրեական դատավարության օրենսգրքի դրույթները թույլ են տալիս նրան կատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանքը (Քրդատ, Գ.131, Կ.2):

Երբ դատարանի կողմից որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը, անձին տեղափոխում են ՀՀ արդարադատության նախարարության՝ կալանավորվածներին պահելու վայր /այսուհետև՝ ԿՊՎ/:

Դատարանը անձին կալանքի վերցնելու որոշում է կայացնում առավելագույնը 2 ամսով:

Մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել մինչև 6 ամիս, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ՝ մինչև 12 ամիս (Քրդատ, Գ.138, Կ.4):

Կարանտին

Մեկուսարան ժամանելուն պես կալանավորված անձը անցնում է արտաքին բժշկական զննություն, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

Եթե կալանավորվածի նկատմամբ կիրառվել է ֆիզիկական բռնություն, նա իրավունք ունի այդ մասին հայտնել զննող բժշկին և պահանջել, որ իր հանդեպ կիրառված բռնության փաստը նշվի արձանագրության մեջ:


Այնուհետև անձին տեղավորում են կարանտինային խցում մինչև 7 օր ժամկետով: Նշված խցում անձը անցնում է մանրամասն բժշկական զննություն: Կարանտինային խցում տեղավորելուց անմիջապես հետո, ԿՊՎ-ի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի ծառայողը կալանավորներին պարտավոր է ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև ներքին կանոնակարգին: Դրա մասին կազմվում է տեղեկանք, որը կցվում է նրա անձնական գործին:

Իսկ հիմնական խուց փոխադրվելուն պես պետք է հսկիչը կալանավորին հայտնի խցում պատին փակցված կալանավորի իրավունքների և պարտականությունների հայտարարագրի մասին: Հայտարարագրի պատշաճ պահպանության պարտավորությունը դրվում է օրվա հերթապահի, իսկ ընդհանրապես սոցիալ-հոգեբանի վրա:

Մեկուսարան ժամանելուց հետո յուրաքանչյուր կալանավորված անձ իրավունք ունի այդ մասին կապի հնարավոր միջոցով անհապաղ տեղեկացնելու իր ընտրած անձին:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայր ընդունվելու կամ մեկ հիմնարկից մյուսը փոխադրվելու մասին ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում գրավոր տեղյակ պահել կալանավորված անձի ընտրած անձին, եթե հնարավոր չի եղել որպեսզի դա անի ինքը կալանավորվածը

Սոցիալ - հոգեբանական ծառայություն


 ԿՊՎ-ուն գտնվելու ընթացքում կալանավորները կարող են անսահմանափակ հանդիպումներ ունենալ հիմնարկի սոցիալական աշխատողի, հոգեբանի և իրավաբանի հետ:

Կալանավորների` ըստ խցերի տեղավորում

Կարանտինային խցից կալանավորվածներին տեղափոխում են սովորական խուց: Կալանավորված անձինք պահվում են անջատ` հետևյալ սկզբունքներով`

- 1) տղամարդիկ` կանանցից,
- 2) անչափահասները` չափահասներից,
- 3) առաջին անգամ կալանավորված անձինք` նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած անձանցից,
- 4) վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում կալանավորված անձինք` մյուսներից,

5) դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, ինչպես նաև ներքին զորքերի զինծառայող կամ նախկին զինծառայող կալանավորված անձինք՝ մյուսներից,

6) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող անձինք՝ մյուսներից,

7) դատապարտյալները և ձերբակալված անձինք մյուսներից, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք փոխադարձ համաձայնությամբ մասնակցում են նույն հիմնարկում իրենց համար կազմակերպված միջոցառումներին,

8) միևնույն քրեական գործով անցնող կալանավորված անձինք՝ միմյանցից՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր ցուցումի հիման վրա,

9) այլ կալանավորված անձինք, որոնց կյանքին՝ կամ առողջությանը վտանգ է սպառնում, մյուսներից՝ ԿՊՎ-ների աշխատակիցների կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր որոշմամբ,

10) անզգուշությամբ կատարված հանցանքի մեջ մեղադրվող անձինք՝ դիտավորությամբ կատարված հանցանքի մեջ մեղադրվող անձանցից,

11) օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ մյուսներից (Օրենք, Զ.31):

Դատաբժշկական հետազոտություն

Կալանավորված անձը, իսկ նրա համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն:

Կալանավորված անձանց հիմնական իրավունքները

Կալանավորված անձն իրավունք ունի՝

1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալ իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ,

2) իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի,

3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դա-

տարանին, դատախազությանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, մարդու իրավունքների պաշտպանին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին,

4) առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրված բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին,

5) սոցիալական ապահովության,

6) ստանալ իրավաբանական օգնություն,

7) անձնական անվտանգության ապահովման,

8) մտքի, խղճի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության,

9) հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ,

10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել դատավարական կամ այլ գործողությունների՝ բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի,

11) կոչվել իր անվամբ կամ ազգանվամբ,

12) անձնական ընդունելության խնդրանքով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին, դրանց գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին,

13) իր մոտ ունենալ քրեական գործին կամ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող փաստաթղթեր և գրառումներ, բացառությամբ այն փաստաթղթերի և գրառումների, որոնք պարունակում են պետական կամ ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք,

14) մասնակցել քաղաքացիաիրավական գործարքների,

Կալանավորված անձը իրավունք ունի նաև՝

1) ստանալ կրթություն, զբաղվել ստեղծագործ աշխատանքով,

2) աշխատել,

3) կալանավորվածներին պահելու վայրի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով ձեռք բերել սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ,

4) ստանալ և ուղարկել դրամական փոխանցումներ: (Օրենք Դ.13)

Խցուն պետք է փակցված լինի կալանավորված անձանց իրավունքների մասին հուշագիր: Ձեր ցանկությանը ԿՊՎ-ի գրադարանից կարող եք ստանալ «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքը:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է ապահովել կալանավորված անձանց անվտանգությունը և նրանց ցույց տալ անհրաժեշտ պաշտպանություն և օգնություն:

Կալանավորված անձինք կարող են իրենց ցանկությանը լրացուցիչ տեղեկություններ ստանալ ներքին կանոնակարգի վերաբերյալ:

Բողոքարկում

Կալանավորված անձը իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով դիմել հիմնարկի աշխատակազմին, նրանց վերադաս մարմիններին (ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն), դատարանին, դատախազությանը (ՀՀ Գլխավոր

դատախազին, ՀՀ Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն), պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին: Դատախազին, դատավորին, պաշտպանին և կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կնքված փաթեթով, մեկ օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատիրոջը (Օրենք, Հ.18):

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է կալանավորված անձանց՝ դատարանին, դատախազին, քննիչին կամ հետաքննության մարմնին հասցեագրված բողոքները և այլ հայտարարություններն ստանալիս անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, դրանք ուղարկել ըստ պատկանելության՝ առանց դրանք ստուգելու կամ գրաքննության ենթարկելու。(Քրդատ, Հ.141, կետ.4):

// Ձեր խախտված իրավունքների մասին
 // բողոքներ կարող եք ուղղել նաև **Մարդու**
 // **իրավունքների պաշտպանին**:

Հասարակական դիտորդների խումբ

Կալանավորված և դատապարտված անձիք, նրանց հարազատները և բոլոր նրանք, ովքեր տեղեկություններ ունեն քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում պայմանների, ազատագրված անձանց իրավունքների և ազատությունների խախտումների մասին կարող են դիմել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերում Հասարակական դիտորդների խումբ: Խմբի անդամներն իրավունք ունեն անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ, ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը, հիմնարկի իրավիճակին, ինչպես նաև հանդիպել ազատագրվածներին և քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց:

Տեսակցություն

Կալանավորված անձինք իրավունք ունեն տեսակցելու մերձավոր ազգականների, զանգվածային լրատույթյան միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ:

/// Անսվա ընթացքում տրամադրվում է ամենաքիչը երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:

Տեսակցությունները կարող են արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր որոշմամբ՝ քննության շահերից ելնելով (Օրենք, Հ.15):

Հեռախոսագրույցներ

/// Կալանավորված անձինք ունեն հեռախոսագրույցների իրավունք (ներառյալ միջքաղաքային հեռախոսագրույցները), որոնք կալանավորված անձանց տրամադրվում են ըստ ԿՊՎ-ի պետի սահմանած ժամանակացույցի:

Հեռախոսագրույցը ապահովվում է ԿՊՎ-ում տեղադրված հեռախոսային ավտոմատների մի-

ջոցով: Յեռախոսային քարտերը ձեռք են բերվում կալանավորվածի կամ նրա հարազատների միջոցներով (Օրենք, Յ.17):

Կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները քննության շահերից ելնելով կարող են արգելվել քրեական վարույթ իրականացնող մարմնի գրավոր որոշմամբ (Օրենք, Յ.17):

Նամակագրություն

Կալանավորված անձանց թույլատրվում է իրենց հաշվին (ծրարները և դրոշմանիշները չեն տրամադրվում ԿՊՎ-ի աշխատակիցների կողմից) վարել անձնական նամակագրություն՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման: Նամակագրությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով և առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

/// *Նամակագրությունը չի կարող արգելվել, այն կարող է ենթարկվել գրաքննության՝ միայն դատարանի որոշմամբ: Գրաքննությունը կատարում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: (Օրենք, Յ.17)*

Հանդիպումներ պաշտպանի հետ

Կալանավորված անձանց տրամադրվում են առանձին, անարգել տեսակցություններ պաշտպանի հետ՝ առանց քանակի և տևողության սահմանափակման:

Տեսակցությունը պաշտպանի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ԿՊՎ-ի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել:

Կալանավորված անձը պարտավոր է՝

- 1) դրսևորել օրինապահ վարքագիծ, պահպանել արգելանքի կամ կալանքի տակ գտնվելու՝ սույն օրենքով, ներքին կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու պայմանները,
- 2) կատարել կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի օրինական պահանջները.
- 3) բարեկիրթ վերաբերմունք դրսևորել կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների և այլ անձանց նկատմամբ,
- 4) չխոչընդոտել կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների, ինչպես նաև այդ վայրե-

րում կարգուկանոնին հետևող այլ անձանց ծառայողական կամ հասարակական պարտականությունները կատարելուն,

5) չկատարել սեփական կամ այլ անձանց առողջությանը կամ կյանքին վտանգ սպառնացող գործողություններ: (Օրենք, Հ.14)

Տույժեր

Ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

1) նկատողության հայտարարում,

2) պատժախուց տեղափոխելը մինչև տասն օր, իսկ անչափահասներին՝ մինչև հինգ օր ժամկետով (Օրենք, Հ.35):

Մինչև տույժի միջոց նշանակելը կալանավորված անձից վերցվում է գրավոր բացատրություն, իսկ եթե նա դրանից հրաժարվում է, ապա այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

Կալանավորված անձինք պատժախցուն պահվում են միայնակ:

Կալանավորված անձինք տեղափոխվում են պատժախուց՝ այդ նպատակով նախատեսված գրանցամատյաններում պարտադիր նշելով պատժախցուն պահելու ժամկետը:

Պատժախցուն գտնվելու ընթացքում կալանավորված անձինք անկողնային պարագաներով ապահովվում են քնի համար սահմանված ժամերին:

Պատժախցուն գտնվելու ընթացքում կալանավորված անձանց արգելվում են նամակագրությունը, տեսակցությունները՝ բացառությամբ պաշտպանի հետ տեսակցությունների, լրացուցիչ սննդամթերք, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ, հանձնուք ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու ստանալը, հեռուստադիտումները, սեղանի խաղերից օգտվելը:

/// Պատժախցուն պահվող կալանավորված անձինք օգտվում են անենօրյա՝ առնվազն մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից (Օրենք, 3.16):

Պահպանվում է առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ներկայացնելու կալանավորված անձանց իրավունքը (Օրենք, Հ.18):

Պատժախցում պահվող կալանավորված անձինք գտնվում են բժշկական հսկողության ներքո:

Կալանավորվածներին պահելու վայրի պետն իրավունք ունի հետաձգել պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատել տույժի ժամկետը կամ վաղաժամկետ ազատել տույժի կրումից՝ բժշկական եզրակացության հիման վրա կամ այլ հիմքով: Եթե հետաձգված ժամանակամիջոցում կալանավորված անձը նոր խախտում չի գործել, նա կարող է ազատվել տույժի կրումից:

/// *Բացի վերը նշվածից՝ այլ սահմանափակումներն արգելվում են: Օրինակ՝ չի թույլատրվում պակասեցնել սննդի սահմանված նվազագույն չափաբաժինը (Օրենք, Հ.19):*

Կալանավորված կանանց և անչափահասների համար

Կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ:

Կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ:

Կալանավորված կանայք իրավունք ունեն կալանքի տակ գտնվելու ընթացքում իրենց մոտ պահել մինչև երեք տարեկան իրենց երեխաներին:

Չդի կամ իրենց մոտ երեխա ունեցող կալանավորված կանանց համար ստեղծվում են համապատասխան նյութակենցաղային պայմաններ, կազմակերպվում է մասնագիտացված բուժապասարկում:

Չդի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանանց որպես տույժի միջոց պատժախուլց տեղափոխելն արգելվում է:

Հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև ներքին կանոնակարգի խախտումներ թույլ տալու դեպքերում կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ կալանավորված անձին ծնողական իրավունքներից զրկելու և երեխային այլ անձանց խնամքին հանձնելու մասին (Օրենք, 3.27):

Հավելված 1

ՑԱՆԿ***Մանդամթերքի, իրերի և առարկաների, որոնք ձեռրակալված անձինք կարող են ունենալ իրենց մոտ կամ ստանալ հանձնուքով***

1) սննդամթերք, ներառյալ՝ մսեղեն, ձկնեղեն, երշիկեղեն, շաքար, թեյ, ճարպ, պաքսիմատ, խնձոր, սխտոր, սոխ, հաց, հացամթերք, մեղր, կարտոֆիլ, հյուլեր, կոնֆետներ, թխվածքաբլիթներ՝ բացի տաքացման անհրաժեշտություն ունեցողներից, շուտ փչացող կամ պիտանության ժամկետը լրացածներից, խմորիչներից, ոգելից խմիչքներից և գարեջրից:

2) ծխախոտ, լուցկի:

3) մեկ լրակազմ սեզոնային հագուստ՝ առանց գոտիների, տաբատակալների և փողկապի, գլխարկ, կոշիկ՝ առանց կոշկաքուղերի:

4) մեկ լրակազմ սպորտային համազգեստ կամ տնային խալաթ:

5) ներքնաշորեր (երկու լրակազմից ոչ ավելի), գուլպա, զուգագուլպա (երկու զույգից ոչ ավելի):

6) ձեռնոցներ (մեկ զույգ):

7) թաշկինակներ:

8) հողաթափեր:

9) անձնական հիգիենայի պարագաներ (տնտեսական և ձեռքի օճառ, հեղուկ օճառ, քսուքներ, ատամի խոզանակ, ատամի մածուկ, պլաստմասայե օճառամաններ, սանր, սափրվելու պարագաներ):

10) օպտիկական ակնոցներ:

11) գլխաշոր, բրդյա գուլպաներ, կրծկալներ, թանգիֆ, վագելին, բամբակ, կանացի միջադիրներ, դիմահարդարման պարագաներ (կանանց համար):

12) հենակներ, ձեռնափայտեր (փայտյա), պրոթեզներ (բժշկի թույլտվությամբ):

13) ճիլոպ կամ սպունգ:

14) գրիչ, մատիտ:

15) գրելու թուղթ, տետրակներ, փոստային ծրարներ, բացիկներ, նամականիշներ:

16) հիգիենիկ թուղթ:

17) մեկ լրակազմ անկողնային սպիտակեղեն (երկու սավան և բարձի երես), սրբիչ:

18) գրականություն (ուսուցանող, կրոնական, պարբերական հրատարակչություն)՝ հինգ անվանումից ոչ ավելի:

19) օրվա մանուլ

20) լուսանկարներ (երկուսից ոչ ավելի):

21) ՁՊՎ-ի բժշկի կողմից նշանակված դեղորայք:

Բացի թվարկվածից՝ ձերբակալված անձանց թույլատրվում է իրենց մոտ ունենալ և պահել քրեական վարույթին կամ իրենց օրինական իրավունքներին վերաբերող փաստաթղթեր և գրություններ, ինչպես նաև պահպանության հանձնված դրամի, արժեքների, փաստաթղթերի և այլ առարկաների կտրոններ:

Ձերբակալված անձինք սափրման պարագաներից օգտվում են ՁՊՎ-ի աշխատակցի հսկողությամբ:

Հավելված 2

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերի ներքին կանոնակարգից

ոստիկանության մարմնի անվանումը
Պետի _____
(անունը, ազգանունը)

Անձնական հաշվում
առկա է

N _____ մեմախցի ձերբակալված

_____ դրամ

(անունը, ազգանունը, հայրանունը)

Հաշվապահ

“___” _____ 200 թ.

ԴԻՍՈՒՄ

Խնդրում եմ թույլատրել ձեռք բերել սննդամթերք և առաջին անհրաժեշտության հետևյալ առարկաները ու իրերը.

N	Սննդամթերքի կամ իրերի անվանումը	Ինչքան է պետք ձեռք բերել	Բացթողնված գումարը (դրամ, լումա)
1	2	3	4

Ընդամենը _____

Ձերբակալվածը լրացնում է միայն 2 և 3 սյունակները:

Ստացա _____ դրամի արժողությամբ

գումարը տառերով

սննդամթերք և առաջին անհրաժեշտության իրեր, այդ գումարը խնդրում եմ դուրս գրել իմ անձնական հաշվից:

“___” _____ 200 թ. _____

ձերբակալվածի ստորագրությունը, (անունը, ազգանունը)

Հավելված 3

Յ Ա Ն Կ

Իրերի, առարկաների եվ սննդամթերքի, որոնք արգելվում են ունենալ կալանավորված անձանց եվ դատապարտյալներին իրենց մոտ, ստանալ կամ ձեռք բերել հանձնուրքներով, ծանրոցներով եվ փաթեթներով

1. Քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ, նյութեր և արտադրատեսակներ
2. Ցանկացած տեսակի հրազեն և սառը զենք
3. Ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց (բջջային հեռախոս, ռացիա և այլն), բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների
4. Դրամ, արժեթղթեր, թանկարժեք իրեր, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների
5. Ապակյա կամ մետաղյա տարաներ, ինչպես նաև այդ տարաներով հեղուկներ կամ սննդամթերք, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

6. Օպտիկական սարքեր (բացառությամբ ակնոցների), բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

7. Ցանկացած տեսակի փաստաթուղթ (բացառությամբ քրեական գործին վերաբերող կամ իրենց իրավունքներին և օրինական շահերին առնչվող փաստաթղթերի և գրառումների, եթե դրանք չեն պարունակում պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք), բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

8. Կացին, մուրճ և այլ գործիքներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

9. Դանակ, ածելու շեղբ կամ կտրող-ծակող այլ առարկաներ, որոնք իրենց կառուցվածքով նման են սառը զենքի, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

10. Ֆոտոխցիկ, տեսախցիկ, վիդեո-, աուդիո ձայնագրող սարքեր և նկարահանող այլ տեխնիկա, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

11. Տոպոգրաֆիկ քարտեզներ, կողմնացույցներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

12. Երաժշտական գործիքներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

13. Խնորիչ, տնային պայմաններում պատրաստված պահածոներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

14. Էլեկտրակենցաղային իրեր (բացառությամբ էլեկտրական ածելիների), բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

15. Անկողնային ծրարներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների

16. Ցանկացած տեսակի այլ առարկա, իր կամ սննդամթերք, բացառությամբ հետևյալ առարկաների, իրերի կամ սննդամթերքի, եթե վերջիններս գնվել են տվյալ կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում գործող խանութից կամ կրպակից`

ա) ծխախոտ, լուցկի, կրակայրիչ,

բ) դատապարտյալների համար սահմանված տեսակի հագուստ, գլխարկ, կոշիկ և անկողնային պարագաներ, քաղաքացիական հագուստ` կալանավորված անձանց և բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների համար,

գ) ներքնազգեստ, թաշկինակ, գոտի, գուլպաներ, վզնոց, զուգագուլպաներ, ձեռնոցներ, թաթնաններ, սենյակային

հողաթափեր, սպորտային կոշիկ, սպորտային համազգեստ, թելեր, սրբիչ,

դ) հիգիենայի պարագաներ (տնտեսական և ձեռքի օճառ, ատամի խոզանակ, ատամի փոշի կամ մածուկ, քսուքներ, շամպուն, սանր), եղունգներ կտրելու աքցան,

ե) գլխաշոր, ռեյտուզ, կրծկալ, մառլյա, բամբակ, հիգիենիկ փաթեթ, ծամկալներ, վազելին և կոսմետիկ պարագաներ (կանանց համար),

զ) հայելի, էլեկտրական կամ միանգամյա օգտագործման անվտանգ ածելի,

է) կոշիկի և հագուստի խոզանակներ, կոշիկի քսուք,

ը) պլաստմասսայից պատրաստված տուփեր՝ ակնոցների, օճառի և ատամի խոզանակների համար,

թ) սպասք՝ ալյումինե, պլաստմասսայե կամ էմալապատ,

ժ) սեղանի խաղեր (բացառությամբ խաղաթղթերի),

ժա) գրականություն, թերթեր, ամսագրեր (բացառությամբ պոռնոգրաֆիկ նյութերի), դասագրքեր, տետրեր, փոստային ծրարներ, բացիկներ, դրոշմանիշեր, հասարակ մատիտներ, գրիչներ,

ժբ) լուսանկարներ, լուսանկարների ալբոմ, օրացույց,

ժգ) գործարանային արտադրության կենցաղային էլեկտրական ջեռուցիչներ (կենտրոնացված ջեռուցման համակարգի բացակայության դեպքում), էլեկտրական թեյնիկ, էլեկտրական սրճեփ,

ժդ) ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված խաչեր և պաշտամունքի այլ առարկաներ,

ժե) հենակներ, ձեռնափայտեր, պրոթեզներ, հաշմանդամների սայլակներ (բժշկի թույլտվությամբ),

ժզ) ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված ձեռքի կամ գրպանի ժամացույց,

ժէ) հեռուստացույց, ռադիոընդունիչ, մագնիտոֆոն (առանց ձայնագրման հնարավորության), սառնարան (փոքր չափերի),

ժը) թզբեհ,

ժթ) գործելու շյուղեր, ասեղնագործության պարագաներ,

ի) մանկական խաղալիքներ, սայլակ (իրենց մոտ երեխա ունեցող անձանց համար),

իա) հանքային ջուր, հյութեր՝ գործարանային արտադրության և պլաստմասսայե տարաներով,

իբ) բանջարեղեն, մրգեր,

իգ) շաքարավազ, կոնֆետ, շոկոլադե սալիկներ, կաթնամթերք (կարագ, պանիր, թթվասեր, մածուկ, կաթնաշոռ), երշիկեղեն, աղ, սուրճ, թեյ, կակաո, բանջարեղեն, միրգ, մաստակ,

իդ) սննդամթերք, որը չի պահանջում ջերմային մշակում:

(ՔՆԿ Ձև N 2)

Օգտակար հասցեներ՝

Մարդու իրավունքների պաշտպան
ՀՀ, 0010, ք.Երևան, Պուշկինի 56 ա,
հեռ. (37410) 537651, ֆաքս՝ (37410) 538842

ՀՀ Փաստաբանների պալատ
ՀՀ, ք. Երևան, 0010
Ջաքիյան փողոց 3
հեռ. 010 565761, 564524
ֆաքս՝ 010 565761

Հանրային պաշտպանի գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, Կորյունի 8շ., բն.5
հեռ. 010 586015
ֆաքս՝ 010 583844

ՀՀ Արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և
նարմիններում հասարակական դիտորդների
խումբ

ՀՀ, ք. Երևան, Այգեստան 11 փող., տուն 43
հեռ. 080-080-804, (010)559634

Օգտագործված հասպակումները՝

Քրդատ - ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք (1998թ. հունիսի 1)

Օրենք - ՀՀ օրենք ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին (2002թ. փետրվարի 6):

ՆԿ - ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ (2008թ. հունիսի 17):

ՔՆԿ - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ (3 օգոստոսի 2006 թվականի N 1543-Ն)

